

Ներառման խթանում ռեգիոնալ համագործակցության միջոցով

Դեկտեմբերի 3-ին ողջ աշխարհում, իսկ Հայաստանում նաև այդ օրվա կապակցությամբ հայտարարված միամսյակին հասարակության ուշադրությունը սևեղծվում է հաշմանդամություն ունեցող մարդկանց խնդիրներին, կյանքին, առօրյային:



«Ունիսոն» հասարակական կազմակերպությունը Նորվեգիայի Թագավորության կառավարության աջակցությամբ իրականացրեց մի ծրագիր, որը հնարավորություն ընձեռեց Հայաստանին և իր անմիջական հարևաններին՝ Իրանին և Վրաստանին, անցկացնել հաշմանդամության

յան իրավիճակի վերաբերյալ համեմատական վերլուծություն և փորձի փոխանակում:

2010թ. նոյեմբերի 30-ին Հայաստանի Ամերիկյան համալսարանում տեղի ունեցավ հաշմանդամության թեմայով 1-ին տարածաշրջանային տեսակոնֆերանսը երեք երկրների մասնակցությամբ: Որպես գործընկեր կազմակերպություններ Իրանի և Վրաստանի կողմից հանդես եկան, համապատասխանաբար, «Բահավար» ասոցիացիան և Հասուն կարիքներով մարդկանց ասոցիացիան:



Բոլոր երկրների կողմից միջոցառմանը ներկա էին ոլորտին առնչություն ունեցող նախարարությունների, այլ պետական կառույցների,

միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Քննարկվեցին օրենսդրության, կրթության, զբաղվածության և մատչելիության ոլորտներում առկա հաջողություններն ու բացերը, ինչպես նաև իրավիճակի բարելավմանն ուղղված քայլերը:

Տեսակոնֆերանսի անցկացման գաղափարը իր ելույթի խոսքում կարևորեց ՀՀ-ում Նորվեգիայի և Ֆինլանդիայի պատվավոր հյուպատոս Թիմոթի Սթրեյթը:

Որպես տարածաշրջանի երկրների միջև հաշմանդամության հարցերի շուրջ կապերի ամրապնդման ևս մեկ միջոց www.disabilitynet.info հասցեով ստեղծվել է կայք , որտեղ տեղ են գտել յուրաքանչյուր երկրում հաշմանդամության վիճակն արտացոլող տվյալները՝ համեմատական եղանակով, ինչպես նաև այլ հետաքրքիր նյութեր (լուսանկարներ, տեսանյութեր, նորություններ և այլն):

Մարիանա Գալիկյան



2010թ. հունիսի 1-ին՝ երեխաների միջազգային օրը, «Ունիսոն» ՀՀ-ն աջակցեց Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ներառական մանկապարտեզներում տոնական միջոցառումների անցկացմանը

Ներառման գաղափարը տիկնիկների մատուցմամբ

Ներկայումս հաճախ է խոսվում հաշմանդամների, կամ առհասարակ, որևիցե սոցիալական, ռասայական, կրոնական կամ այլ տարբերություն կրող մարդկանց հասարակության մեջ ներառման մասին: Դա շատերի կողմից ընկալվում է ինչպես նորարարական միտում, մինչդեռ քչերն են նկատել, որ իրենց քաջածանոթ դասական հեքիաթներում կամ պատմվածքներում հեղինակները վեր են հանում հենց ներառական գործընթացին խոչընդոտող կամ նպաստող երևույթները, այս առումով դաստիարակելով ընթերցողին: Նմանատիպ մի ստեղծագործության միջոցով «Ունիսոն» ՀՀ-ն որոշեց մա-

տուցել ներառման գաղափարը նախակրթական և կրթական հաստատություններ հաճախող երեխաներին: Վորլդ



Վիժն Հայաստանի հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում աշխատանք տարվող մանկապարտեզներում և դպրոցներում ցուցադրվում է Հ.Ք.Անդերսենի հանրահայտ «Անձոռնի ձուտիկ» հեքիաթի հիման վրա բեմադրված տիկնիկային ներկայացումը (բեմականացման հեղինակ՝ Հակոբ Գուլիկյան), որը մի յուրատեսակ դաս-նվեր է փոքրիկ հանդիսատեսի համար: Շնորհիվ Պիկոլինո անունով տիկնիկ-վարորդի, երեխաները ինտերակտիվ մթնոլորտում ծանոթանում են բազմազանության և հավասարության սկզբունքներին:

Ներկայացումը կօգնի մանուկներին ընկալել և ընդունել, շփվել և ընկերություն հաստատել իրենց հասակակիցների հետ՝ կարևորելով ոչ թե արտաքինը, այլ ընդհանուր մարդկային արժեքները:

Ս.Չ.

Իրավաբանի անկյուն

Հարց և պատասխան

– Ժառանգության բացման ժամանակ ի՞նչ արտոնթյուններ կան և օգտվում է՞նչ անդամները: Ս.Պ., 1-ին խմբի հաշմանդամ, ք.Աշտարակ

«Հարգալից քաղաքացիական օրենսգրքի 1194 հոդվածով սահմանված է ժառանգության պարտադիր բաժնի իրավունքը, որի էությունը կայանում է նրանում, որ ըստ կտակի ժառանգության բացման ժամանակ ժառանգատուի անչափահաս երեխաները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով հաշմանդամ կամ անգործունակ ճանաչված կամ 60 տարեկան դարձած ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները, անկախ կտակի բովանդակությունից, պարտադիր բաժնի իրավունք ունեն: Ընդ որում պարտադիր բաժնի է համարվում ժառանգի իրավունքը, ժառանգելու այն բաժնի առնվազն կեսը, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում:

Կտակի բացակայության դեպքում ժառանգների թվին են պատկանում այն անաշխատունակ անձինք, ովքեր մինչև ժառանգատուի մահն առնվազն մեկ տարի գտնվել են նրա խնամքի ներքո: Ըստ օրենքի այլ ժառանգների առկայության դեպքում նրանք ժառանգում են այն հերթի ժառանգների հետ միասին, որը ժառանգության է իրավիղվում:

Գայանե Խաչատրյան
ՀՀ Փաստաբանների պալատի անդամ

Գերմանիայում մտադիր են բացել համալսարան, որտեղ դասավանդումը կանցկացվի ժեստերի լեզվով

Գերմանիայում մտադիր են բացել Եվրոպայում առաջին համալսարանը, որտեղ դասավանդումը կանցկացվի ժեստերի լեզվով, հայտնում է Deutsche Welle (Գերմանական ալիք) գործակալությունը:

Այս հետաքրքիր կրթական նախագիծը նախատեսվում է կյանքի կոչել առողջարանային Բադ Կրոյց-նախ քաղաքում:

Նշվում է, որ դասավանդման համար ընտրվելու է գերմաներեն ժեստերի լեզուն, քանի որ ժեստերի լեզուները, ինչպես և սովորական ծայրնավորված լեզուները, էականորեն տարբերվում են միմյանցից: Այս բուհում բարձրագույն կրթության դիպլոմներ կարող է ստանալ 2000 ուսանող:

Համալսարանի բացման նպատակով դրամահավաք է կազմակերպվել, որով զբաղվում է բեռլինցի քիմիկոս Ինգո Բարտի գլխավորած նախաձեռնող խումբը: Նա առաջին խուլ գիտնականն է, որը Գերմանիայում արժանացել է քիմիական գիտությունների թեկնածուի գիտական կոչումի:

Աղբյուր՝ www.tert.am

Բուհի բացման համար, որը նախատեսվում է 2013-ին, անհրաժեշտ է 100 մլն եվրո:



Գերմանիայում խուլերն իրավունք ունեն սովորել համալսարանի ցանկացած ֆակուլտետում, և դրա համար նրանց կցվում է թարգմանիչ:

«Իրականում ամեն ինչ այդքան հեշտ չէ, քանի որ թարգմանիչն օգնում է միայն դասախոսությունների ժամանակ, իսկ ահա դասամիջոցների ընթացքում խուլ ուսանողը հայտնվում է ժեստերի լեզվին չտիրապետող համակուրսեցիների շրջապատում», - ասում է թարգմանչուհի Միխայելա Մաթեյը: Ըստ նրա՝ Գերմանիայում այս ոլորտում աշխատում է ընդամենը 500 մասնագետ, որոնք երկրում բաշխված են անհավասարաչափ:

Ամեն օր ժեստերի լեզվի թարգմանիչների ծառայություններից օգտվում է մոտ 200 հազար մարդ:

39 աշխատատեղ հաշմանդամների համար

Ստեֆանի Էվարդսի շարժական սեղանները համարված են հատուկ պլաստիկ տուփերով, որոնք խողովակներով կցված են իր սայլակին:

Նա ոգևորված պատմում է ԱՄՆ Մեսա քաղաքում գործող Բլյու Ռիբոն ճաշարանում իր նոր աշխատանքի մասին:

- Ես չփվող անձնավորություն եմ և սիրում եմ աշխատել այստեղ, - ասում է 24-ամյա Էվարդսը: - Նախկինում չեմ էլ երազել նման հնարավորության մասին:

Ոեստորանն ապահովում է Մեսայի շուրջ 1000 աշխատող բնակիչների նախաճաշը և ճաշը:

Էվարդսը այս հաստատությունում աշխատող 39 հաշմանդամներից մեկն է: Նրանցից շատերն ունեն զարգացման, ֆիզիկական կամ հոգեկան բնույթի խնդիրներ:

Հաշմանդամություն ունեցող ռեստորանային անձնակազմի հետ աշխատում են հատուկ մասնագետներ:

- Մենք ուզում էինք աջակցել Մեսայի հաշմանդամներին, - ասում է Աբիլիտացիայի դաշնային կենտրոնի տնօրեն Իվետ Սմիթը: - Նման

Շարունակությունը՝ վերջին էջում

«Ունիսոն» ՀՀ-ն հաշմանդամներին առաջարկում է

- իրավաբանական խորհրդատվություն
- զբաղվածության կենտրոնի ծառայություններ
- աշխատանք գտնելու նոր հնարավորություն՝ գրանցվել www.jobs.disability.am կայքում

Բոլոր գործատուներին. գտեք ձեր պահանջներին համապատասխանող որակյալ կադրեր www.jobs.disability.am կայքում

52-21-70

Նախագիծն իրականացվում է Բաց Հասարակության Ինստիտուտի և Սիդեյլանդիայի Կառավարության ֆինանսական միջոցներով

«Ունիսոնը» շարունակում է հաշմանդամների իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագիրը

«Ունիսոն» ՀՀ-ն 2006-2010 թվականների ընթացքում Բաց Հասարակության Ինստիտուտի աջակցությամբ իրականացրեց հաշմանդամների իրավունքների պաշտպանությանն ուղղված մի ծրագիր, որի նպատակն էր բարձրացնել Երևանում և Հայաստանի բոլոր մարզերում ապրող հաշմանդամություն ունեցող անձանց իրազեկվածությունը

իրենց իրավունքների վերաբերյալ, աջակցել վերջիններիս աշխատանքի տեղավորման հարցում, հանրային հնչեղություն հաղորդել և անհրաժեշտ լուծումներ տալ ոլորտում առկա իրավախախտումներին և այլն:

Բացի այդ, «Ունիսոնի» անձնակազմի մարզային այցելություններն ամրապնդեցին մայրաքաղաք-մարզ համագործակցությունը և թույլ տվեցին ուսումնասիրել յուրաքանչյուր շրջանի առավել հրատապ խնդիրները՝ հետագա քայլերի ձեռնարկման համար:

Եվ քանի որ հաշմանդամների իրավունքների պաշտպանության մակարդակը համեմատաբար ցածր է մարզերում, 2011 թվականի ծրագրի գործո-

ղությունների շրջանակում բոլոր մարզերում կնշանակվի «Ունիսոնի» կողմից լիազորված իրավապաշտպան (անհատ կամ կազմակերպություն), որը տեղի շահառուներին անհրաժեշտ միջնորդություն և խորհրդատվություն է տրամադրելու:

Մարզային այցելությունները վերահսկեցին ևս մեկ բաց՝ Սպիտակ քաղաքում, որտեղ հասկանալի պատճառներով հաշմանդամություն ունեցող անձանց թիվը բավականին մեծ է, չկա հաշմանդամների հարցերով զբաղվող և ոչ մի հասարակական կազմակերպություն: 2011 թվականին այս քաղաքում «Ունիսոնը» կհիմնի իր երկրորդ մասնաճյուղը (առաջինը 2008-ից գործում է Սյունիքի մարզի Մեղրի քաղաքում), որի ծավալած աշխատանքները հաշմանդամների կյանքի որակի բարելավման գործուն խթան կհանդիսանան:

Արմեն Ալավերդյան

Տեսնել լեզվի միջոցով

Մշակվել է նոր սարք, որի միջոցով, ինչպես պնդում են գյուտարարները, կույր մարդը կկարողանա տեսնել շնորհիվ լեզվի վրա տեղակայված նյարդային բջիջներից ուղեղ փոխանցվող ազդակների:

Դեռևս 1960թ. հայտնի նյարդավիրաբույժ Փոլ Բաչ-ի-Ռիտայի կողմից առաջ քաշվեց մի թեզ, համաձայն որի մարդը «տեսնում է ուղեղով», իսկ աչքը ծառայում է միայն որպես արտաքին լուսային ազդակների «առաքիչ»:

Մարդկային ուղեղը շատ ձկուն գործիք է, որն ունակ է փոխարինել «շարքից դուրս եկած» զգայարանները գործողներով: Այսպես, աչքերին կարող է փոխարինել լեզուն:

Փոլ Բաչ-ի-Ռիտան մեծ աշխատանք էր կատարել իր տեսությունը կյանքի կոչելու ուղղությամբ, ինչի արդյունքը դարձավ BrainPort սարքի մշակումը:

Այս յուրատեսակ սարքի հիմնական ֆունկցիան լեզվի վրա շոշափելի կերպարների ստեղծումն է, ինչը թույլ է տալիս օգտագործողին «զգալ»



շուրջը տեղի ունեցող իրադարձությունների վիզուալ շարքը:

BrainPort-ը բաղկացած է ակնոցների մեջ տեղադրված փոքրիկ (մոտավորապես 1.5 սմ տրամագծով) թվային տեսախցիկից, լեզվի վրա ամրացրած էլեկտրոդներից և բջջային հեռախոսի չափսերը չզերազանցող սարքից: Վերջինիս մեջ առկա են խոշորացման և պայծառության կառավարման ռեժիմները, ինչպես նաև պրոցեսորը, որը տեսախցիկից ստացված ինֆորմացիան փոխակերպում է լեզվին փոխանցվող էլեկտրական ազդակի: Ազդակներից ուղեղը ձևավորում է որոշակի պատկեր, և օգտագործողը ստանում է բավականին լավ տեսնելու, անգամ խոշոր տառերով գրված

բառերը կարդալու հնարավորություն: BrainPort-ը 15 րոպե կիրառելուց հետո կույրերը սկսում են ընկալել տարածական տեղեկատվությունը:

Սարքի գյուտարարների և մշակողների հավաստմամբ, անհրաժեշտ է միայն սովորել կիրառել այն, ինչպես, օրինակ, առաջին անգամ սովորում են հեծանիվ քշել:

BrainPort-ի լավագույն հատկանիշներից է նաև այն, որ նրա օգտագործումը չի պահանջում վիրաբույժի միջամտություն:

Սարքի արժեքը կազմում է մոտավորապես 5000 դոլար:

Աղբյուր՝ www.scientificamerican.com

Ա՛խ, եթե...

Սկիզբը՝ 5-րդ էջում

Առավոտյան շտապում էի հերթական քննության: Արագ քայլում էի, հանկարծ նկատեցի մի երիտասարդի, որն ինձ հետևում էր: Մի պահ մտածեցի՝ համընկնում են մեր ճանապարհները: Սակայն, քիչ անց մոտեցավ ինձ և խնդրեց ծանոթանալ: Մերժեցի խնդրանքը, պատճառաբանելով քննությունս: Երիտասարդը չհեռացավ, անընդհատ խնդրում էր, որ զոնե մի րոպե լսեմ իրեն: Երբ մոտեցանք մասնաշենքին, որտեղ պետք է անցնեք քննությունը, խնդրեցի, որ հեռանա: Նա համառում էր: Խնդրեց թույլ տամ իրեն ուղեկցել մինչև քննասենյակ: Մերժեցի: Թույլ տվեցի օգնել ինձ բարձրանալ շենքի մուտքի աստիճաններով (քանի որ ինքս դժվարանում եմ բարձրանալ), պայմանով, որ կհեռանա: Շնորհակալություն հայտնեցի օգնելու համար, փորձեցի հրաժեշտ տալ, սակայն չհեռացավ: Եկավ մինչև քննասենյակ: Մի քանի րոպեից տեղեկացա, որ քննությունը չի կայանալու և հետաձգվում է մինչև հաջորդ առավոտ: Այլևս պատճառ չունեի մերժելու, նրան չլսելու: Մինչև փորձում էի պատճառ հորինել, նա, նայելով ինձ, ասաց.

- Հիմա էլ պատճառ չկա, մի քիչ զբոսնենք:

Մերժելու մեկ ուրիշ պատճառ էլ գտա, դա էլ չօգնեց: Ձգացի, որ համառում է, ու տեղի տվեցի: Եվ մենք սկսեցինք քայլել ու զրուցել: Քայլում էինք, գրուցում, խոսքից խոսք էր բացվում, մի թեմայից մյուսին էինք անցնում՝ չնկատելով, թե ինչպես է ժամանակը առաջ սլանում: Հետաքրքիր ու հաճելի զրուցակից էր, երկուսիս նախասիրությունների, ապրած կյանքի մեջ ինչ-որ ընդհանուր բաներ կային: Երբ նայեցի ժամացույցին, արդեն երեկոյան ժամը յոթն

էր: Հրաժեշտին խնդրեցի, որ էլ չգա: Հաջողություն մաղթեցի և գնացի: Քայլերս ակամա ինձ տարան այնտեղ, որտեղ մայրս էր աշխատում: Ցանկացա պատմել, խորհուրդ լսել, մեղմել ֆիզիկական և հոգեկան ցավս: Ուշանալուս պատճառը փորձեցի բացատրել, սակայն մինչ դա կանեի, ականջներիս մեջ զրնգացին բարկացած մորս խոսքերը. «Բավական է, հեքիաթներ մի պատմիր»:


Մայրս չհասկացավ ինձ, այդպես էլ չկարողացա պատմել, դուրս հանել ներսումս կուտակվածը, և ես մնացի մենակ: Տանը արցունքներիս ազատություն տվեցի: Լավ է զոնե արցունքներս օգնեցին, որ հոգումս բարձրացած փոթորիկը փոքր-ինչ խաղաղվի: Հաջորդ առավոտ գնացի քննության, նա այնտեղ էր՝ սպասում էր: Քննությունից հետո զբոսնեցինք: Քայլում էինք, սակայն ավելի շատ լռում էինք, քան խոսում: Երկարատև լռությունից հետո ասաց.

- Շա՛տ ուրախ եմ, որ ծանոթացաք ես, առաջին անգամ եմ նման իրավիճակում, չգիտեմ ինչպես վարվեմ: Գիտե՞ս, եթե մենք իրար հասկանանք, մեզ մոտ ամեն ինչ կստացվի, և եթե հանկարծ ծնողներս դեմ լինեն մեր միությանը, ապա ես ոչ մի կարծիք հաշվի չեմ առնի և կմնամ քեզ հետ, սակայն եթե հանկարծ այնպես ստացվի, որ մենք իրար չհասկանանք և բաժանվենք, չեմ ուզում, որ մտածես՝ մեր բաժանման պատճառը քո առողջականն է, չեմ ուզում քեզ ցավ պատճառել, ուզում եմ քեզ թողնել ընտրությունը, շարունակենք հանդիպել, թե ոչ, ինքդ որոշիր, լա՞վ: Վաղը կհանդիպենք և կասես՝ ինչ որոշում ես կայացրել, անկեղծ ասեմ, ես շատ եմ ուզում, որ շարունակենք հանդիպել: Իսկ դո՞ւ: Չգիտեի՝ ինչ պատասխանել, ես էլ էի առաջին անգամ նման իրավիճակում, ինձ համար էլ էր շատ դժվար, ասացի, որ վաղը կհայտնեմ իմ որոշման մասին: Չեմ կարող նկարագրել, թե ինչ ապրումներ ունեցա այդ գիշեր, մինչև լույսը բացվեց: Ինչքան էլ դժվար էր ինձ համար, որոշեցի, որ չեմք հանդիպի: Նայելով իրականության աչքերին՝ գիտակցում էի, որ ճիշտ որոշումը դա էր: Ինչո՞ւ եմ ես վախենում, ինչո՞ւ եմ փորձում ոտքերիս թերությունը դարձնել չափանիշ: Չգիտեմ...

Նրա շնորհիվ, թեկուզ և կարճ ժամանակով, զգացի, թե ինչքան հաճելի է, երբ լինում ես ուշադրության կենտրոնում, երբ ինչ-որ մեկը մտածում, անհանգստանում է քեզ համար: Ա՛խ, եթե...



սանկարիչներ Մարիաննա Մելիքսեթյանի և Գարեգին Ղազարյանի նախածեռնությամբ անցկացրեց «Իմ ժպիտը քո ձեռքերում է» խորագրով Ֆոտոցուցահանդես: Միջոցառումը տեղի ունեցավ Վորլդ Վիժն Հայաստան բարեգործական կազմակերպության «Հաշմանդամների կազմակերպությունների հզորացում հանուն առավելագույն ներառման» ծրագրի շրջանակներում ԱՄՆ Միջազգային Զար-



գացման Գործակալության աջակցությամբ:

Ֆոտոցուցահանդեսի հանդիսավոր բացումը կայացավ 2010թ. սեպտեմբերի 18-ին

Իմ ժպիտը քո ձեռքերում է

Մոսկվայի Տան ցուցասրահում, ուր ներկա էին բազմաթիվ հյուրեր ինչպես Երևանից (կրթական հաստատություններ, տեղական և միջազգային կազմակերպություններ, Ազգային ժողով, դեսպանատներ, Բրիտանական հոբոբոլո, Օրանժ Արմենիա ընկերություն և այլն), այնպես էլ մարզերից (Շիրակ, Լոռի, Կոտայք, Արագածոտն):

Ի դեպ, նկարահանումներին նույնպես մասնակցել էին ոչ միայն մայրաքաղաքի, այլ նաև

Այցելուներին անմիջապես ցուցասրահի մուտքից «դիմավորում» էին 24 ժպտացող երիտասարդների խոշոր չափսի սևուսպիտակ դիմանկարները:



Ի դեպ, մոդելներից շատերը նույնպես հանդիսատեսների թվում էին:

Բոլորին հատկապես գերեց ամենակրտսեր մասնակցի՝ Աշտարակից ժամանած 7-ամյա Շուշանիկի կենսախնդությունը, աշխուժությունը և մանկական անմիջականությունը:

Երկրորդ ժանրի նկարները պատմում էին նույն մարդկանց առօրյայի, հետաքրքրությունների լայն շրջանակի մասին:

Ուսում, աշխատանք, արվեստ, բնություն՝ լուսանկարների հերոսներից յուրաքանչյուրն ունի իր նախասիրությունները և ինքնաարտահայտվելու յուրատեսակ հնարավորությունները: Իսկ նրանց միավորողը՝



հետ համագործակցող մարզային հասարակական կազմակերպությունները:

կյանքի հանդեպ տածած մեծ սերը և լավատեսությունն է:

